Վերջապես Քվեբեկի հինգ միլիոն ընտրողների համար դարձավ «անկախության հանրաքվեի» օրը: Անցյալ տողական ուղղվածության «Քվեբեկյան կուսակցության» ղեկավար Ժակ Փարիզոյի հայտարարության համաձայն, այն նախատեսված է անցկացնել հոկտեմբերի 30-ին, գրում է անգլիական «Էկոնոմիստ» հանդեսը: 1980-ին անցկացված նախորդ հանրաքվեն, որ ձայների 60-ի դեմ 40 տոկոսով պարտության էր մատնվել, նախատեսում էր Կանադայի մնացյալ մասերի հետ կապը պահպանելով հանդերձ ինքնորոշման հասնել: Ներկա հանրաքվեն անկախություն հայտարարելով, քաղաքական եւ տնտեսական կապերի շուրջ բանակցությունների առաջարկ է ներկայացնելու: Այս հիման վրա է, որ անցյալ հունիսին Փարիզոն եւ ֆեդերալ խորհրդարանում նրա դաշնակից Լյուսիեն Բուշարը պաշտպանություն են սացել նախկին լիբերալ Սանդի Դյումոնի, որի նորաստեղծ Քվեբեկի «Դեմոկրատական գործողություն» կուսակցությունը անցյալ տարվա նահանգային ընտրություններում վաստակել էր ձայների 6,5 տոկոսը: Հենց այս տոկոսի վրա են անջատողականներն իրենց հույսը դրել հարթակ տանելու համար, եւ հասարակական կարծիքի հարցումների տվյալներով այդ հույսերը կարող են իրականություն դառնալ:

Սակայն, հարցի էությունն այն է, թե անջատվելուց հետո ինչքանով են Կանադայի մյուս մասերը ցանկություն հայտնելու համագործակցել նրանց հետ: Օգոստոսի 24-ին անցկացված տասը նահանգապետերի տարեկան հերթական հանդիպումը Փարիզոն օգտագործեց համոզելու համար մյուսներին, որ նման համագործակցությունը «դժվար չի լինելու»: Նա խոսեց ազատ շուկայական առեւտրի եւ միջնահանգային արգելքների վերացման մասին, հավաստիացնելով լրագրողներին, թե երկրի վարչապետի մտածելակերպն այդ առնչությամբ վերջերս «էվոլյուցիա է ապրել»: Իսկ այդ «էվոլյուցիան» պարզապես այն էր, որ վերոհիշյալ հանդիպումից հետո միացյալ հաղորդագրության մեջ չէր նշված, թե միջնահանգային համագործակցությունից չի օգտվելու անկախացած Քվեբեկը: Այնման զայրացրեց Փարիզոյի այդ դիրքորոշումը, որ նրա մեկնելուց հետո մյուսները պարբերությանը տվեցին ավելի խստացված սահմանում ավելացնելով, որ խոսքը վերաբերում է բացառապես կանադական նահանգներին եւ տարածքներին:

Միջադեպը սակայն ծառայեց, որ դաշնակցայինները ավելի զգուշավոր մոտեցում ցուցաբերեն անջատողականների հոսքորական կոչերին եւ հաշվի նստեն դրանց հետ: Քվեբեկի լիբերալ կուսակցության առաջնորդ Դենյել Ջոնսոնը, որը կտրականապես դեմ է անջատվելու քաղաքականությանը, նշել է, որ վարչապետ վերընտրվելու դեպքում Քվեբեկին կվերաբերվի ինչպես «առանձնահատուկ հասարակության», իսկ երկրի ներկա վարչապետ Ժան Կրետյենը մի փոքր առաջ անցնելով նույնիսկ համաձայնել է 1997-ին վերանայել 1982-ին ընդունված Սահմանադրությունը: Որոշ շրջաններում այս խոսքը դիտվել է որպես «գիջումային քայլ»:

Մինչեւ վերջնական կարգավորումը Փարիզոն պարտավոր է այնուամենայնիվ իմանալ, որ իր նահանգում անկախանալու ձգտումներ կարող են ունենալ նաեւ ուրիշները, այդ թվում տարածաշրջանի բնիկներ համարվող կրի հնդիկներն ու ինուիտ էսկիմոսները հյուսիսային մասում, որոնք մոտ 18 հազար են եւ զբաղեցնում են ամբողջ նահանգի մեկ երրորդ մասը: Այդ տարածքը Քվեբեկին է միացվել միայն 1912 թվին: Նրանք ցանկանում են մնալ Կանադայի կազմում եւ այդ առնչությամբ մտադիր են անցկացնել իրենց սեփական հանրաքվեն Փարիզոյինից առաջ: «Էկոնոմիստ» թղթակցի 90 հիշեցնում է, որ նրանց կողմից 1980-ին անցկացված նման մի հանրաքվեի արդյունքում 87 [illegible] դեմ է արտահայտվել: Փարիզոն այս հանգամանքը [illegible] է հաշվի առնի: Հանրաքվեին հաշված օրեր են մնում:

Հ. Օ.

ՍԵՐԲԻԱ

Միլոշեւիչ. Հաշտարար, որին հրաժարականի էին համարում

Սերբիայի նախագահ Սլոբոդան Միլոշեւիչը դեռ վերջերս համարվում էր պատերազմի հրաժարականի եւ պատերազմական հանցագործ: Այժմ նրան անընդհատ փորձում են մեղադրանք ներկայացնել թե Արեւմուտքը եւ թե Ռուսաստանը: Այս տարի Սերբիայի գաղտնի ծառայության աշխատակից Զեղոմիր Միխայլովիչը փախավ Արեւմուտք, տանելով փաստաթղթեր, որոնք հանձնեց նախկին Հարավսլավիայում կատարված պատերազմական հանցագործությունների քննության համար ՄԱԿ-ի հիմնած միջազգային ատյանին: Ատյանը արդեն հանցագործների թվին է դասել բոսնիացի սերբերի ղեկավար Ռադովան Կարաջիչին եւ բանակի հրամանատար գեներալ Ռատկո Մլադիչին:

Փաստաթղթերը (բոսնիացիների համակենտրոնացման ճամբարների կազմակերպմանն առնչվող հրահանգներ) կարծես թե վկայում էին պատերազմական հանցագործությունների Միլոշեւիչի մասնակցության մասին: Սակայն փաստաթղթերին ընթացք չտվեցին: ամերիկացիներն ասացին, թե իրենք վստահ չեն դրանց իսկությանը: Միլոշեւիչը ներկայումս Արեւմուտքի ոչ թե թշնամին է, այլ գործընկերը: Պատճառը պարզ է. Սերբիայի նախագահը դեռեւ է ամեն գնով հասնել այն բանին, որ ՄԱԿ-ը վերացնի Հարավսլավիայի Միութենական Հանրապետության նկատմամբ հաստատված բեռնարգելը: Այս իրավիճակը միջազգային պատժամիջոցների օգտակարության դասական օրինակ է:

Նախկին Հարավսլավիայի տարածքում Սլոբոդան Միլոշեւիչը ամենահմուտ քաղաքական գործիչն է: Նա պատասխանատու է 1987 թ-ից եւ կենտրոնակուսությամբ ու դրդմտիգմի հրաշքներ գործում: Նա վարդեսորեն կառուցանում է զգալի ժամանակի ընթացքում եւ կտրուկ շրջադարձ կատարելու դրսի: Մի ժամանակ Սերբիան իր ղեկավարին կոչ էր անում մարտի առաջնորդել երկիրը: Այժմ Սերբիան ցանկանում է անդորր եւ աղաղակ կյանք:

Երբ մայիսին խորվաթական զորքերը հարձակում սկսեցին Սերբական Կրահինայի վրա, իսկ սեպտեմբերին ՆԱՏՕ-ի օդուժը ռմբակոծեց բոսնիացի սերբերին, արտաքսականները հույս ունեին, թե դա Միլոշեւիչին կդրդի վերադառնալ նախկին հաղթականությանը: Բայց Սերբիայի նախագահը հաստատակամ է: Նա գիտե, որ Սերբիան, չնայած Խորվաթիայում եւ Բոսնիայում ապրող հայրենակիցների հանդեպ ջերմ սիրո հավատիացումներին, չի ուզում կռվել եւ չի կռվի:

Միլոշեւիչին փնովում են միայն արմատականները, ընդելով, որ Կրահինայում սերբերի կրած պարտությունը Ծանրացած է նրա խղճի վրա: Որոշակի իմաստով դա ճիշտ է: Հիշելով 1991թ. պարտությունը, խորվաթները երկար ժամանակ

չէին համարձակվում ուժով ազատագրել իրենց հողերը: Նրանք Սերբական Կրահինայի ղեկավարներին առաջարկում էին լայն ինքնավարություն: Բանակցությունները վարվում էին Խորվաթիայում Ռուսաստանի դեսպանատանը:

Եթե սերբերը ընդունեին Խորվաթիայի առաջարկը, Կրահինան կունենար սեփական հարկային համակարգ, արժույթ, դրոշներ, նույնիսկ զրոհ: Կրահինայի ղեկավարները պատրաստ էին փոխզիջման դիմել, բայց այն ժամանակ Միլոշեւիչը չէր պարզապես հեռացրեց «հաշտվողականներին» եւ նրանց փոխարինեց իր հին կամակատարներով: Արդյունքը հայտնի է:

Միլոշեւիչը կարողանում է համոզել մարդկանց: Նա գիտե, որ հաշտության տանող յուրաքանչյուր քայլ մոտեցնում է Սերբիայի դեմ հաստատված միջազգային պատժամիջոցների վերացմանը: Ահա թե ինչու հերթական շրջադարձը կատարելով իր քաղաքական կարիերայում, Սլոբոդան Միլոշեւիչը կրկին բռնում է Արեւմուտքի հետ սերտ գործակցության ուղին:

«ԻԶՎԵՍՏԻԱ»

ՀԱՄԱՌՈՏ

Ֆիլիպինները Իրանից նավթ է գնելու

Իրանի ռադիոյի համաձայն, նախագահ Հաբեմի Ռաֆսանջանին, որ պաշտոնական այցով մեկնել էր Ֆիլիպիններ, հոկտեմբերի 8-ին Մանիլայում հանդիպեց երկրի նախագահ Ֆիդել Ռամոսի հետ: Հանդիպման ընթացքում շոշափվեցին երկու երկրների բազմակողմ համագործակցությանն առնչվող հարցեր: Հաջորդ օրը Ռաֆսանջանին մեկնեց խոշորագույն Սեբու նավահանգիստ, որը նաեւ երկրի առեւտրատնտեսական կենտրոններից մեկն է: Սեբուի իշխանությունները Իրանի պատվիրակության հետ քննարկեցին նավթի արդյունաբերությունում համագործակցելու հարցեր: Ըստ ռադիոտեղեկատվության, Ֆիլիպիններում կազմվել են մի շարք համաձայնագրեր տնտեսական, գյուղատնտեսության, նավթարդյունաբերության, գիտության եւ մշակույթի ոլորտներում համագործակցելու, ինչպես նաեւ Իրանից նավթ գնելու վերաբերյալ:

Նոր ջրամբար Էրզրումի շրջանում

9 ՀՈԿՏԵՄԲԵՐ, TRT: Էրզրումի շրջանում հանդիսավոր պայմաններում գործարկվեց Քուզգունի ջրամբարը: Այսուհետեւ ոռոգման կենթարկվեն 50 հազար հեկտար անջրդի հողեր, որի շնորհիվ կբավարարվի Էրզրում քաղաքի բնակչությունը գյուղմթերքներով ապահովելու պահանջարկի մի մասը: Բացի դրանից, ջրամբարի վրա կառուցվել է նաեւ հիդրոէլեկտրակայան, որը կապահովի շրջանի գյուղերի էլեկտրաէներգիայի պահանջարկը:

Նպատակը՝ Սատուրն-2004

Նախագիծն ավարտված է. 1997-ին իրականացվելու է եվրոպական ESA-ի եւ ամերիկյան NASA-ի համագործակցության արգասիքը հանդիսացող Հյուգենս հետախուզասարքի (զոնդ) արձակումը, ազդարարում է «Լը Նուվել Օբսերվատոր» հանդեսը: Եթե ամեն ինչ բարեհաջող ընթանա, սարքը Սատուրն կհասնի 2004-ի հուլիսին եւ կմնա այդ մոլորակի ամենախոշոր արբանյակի՝ Տիտանի մթնոլորտ: Տիտանն «արեգակնային համակարգում իր համարժեքը չունեցող օբյեկտ» է, որի ազոտով եւ ածխաջրածնով հարուստ մթնոլորտը, մասնագետների համոզմամբ, կարող է դառնալ կյանքի պարզ ձեւերի աղբաստարան: Խնդրո առարկան պարզելու համար զինվեցք համբերությամբ, կոչ է անում ֆրանսիական հանդեսը:

ԹՈՒՐՔԻԱ

Գործադուլը դադարեցնելու հերթական բանակցությունն ավարտվեց անարդյունք

Թուրքական հեռուստատեսության հաղորդման համաձայն, Թուրքիայի (Թուրքիայի աշխատանքի համընդհանուր կոնֆեդերացիա) եւ կառավարության ներկայացուցիչների միջեւ համընդհանուր գործադուլը դադարեցնելու ուղղությամբ տեղի ունեցող հանդիպումների հերթական փուլը կրկին անարդյունք ավարտվեց: Հանդիպման ավարտից հետո կառավարության ներկայացուցիչների խմբի ղեկավար, պետնախարար Նեջմեթթին Ջեւիթին լրագրողներին ասաց. «Աշխատավարձի բարձրացման դրույքաչափերի մեր կողմից ներկայացված տարբերակը Թուրքիայի դեկավարությանը նորից չբավարարեց: Կառավարության ներկայացրած առաջարկի համաձայն միջինում աշխատավարձը տարեկան կկազմի 11 միլիոն լիրա: Թուրքիան պետք է ճիշտ հասկանա, որ պետությունը այլ հնարավորություններ չունի»: Իսկ Թուրքիայի նախագահ Բայրամ Մեռալը լրագրողների հանդիպման ժամանակ ասաց. «Կառավարությունը կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերի ստորագրման հարցում բոլորովին անտեսում է խորացող սղաճի իրողությունը: Կառավարության կողմից ներկայացված առաջարկը ընդունելու դեպքում աշխատավորների կենսամակարդակը էլ ավելի կվատթարանա: Մենք նման պայմանագիր երբեք չենք ստորագրի: Ինչպես երեւում է, գործադուլը կառավարությանը դուր է գալիս, եւ մենք այն կշարունակենք»: Ինչպես նշում են քաղաքական դիտորդները, շարունակվող գործադուլից տուժում են թե՛ գործադուլավորները ու ընդհանրապես ժողովուրդը, եւ թե՛ կառավարությունն ու պետությունը: Քաղաքական դիտորդների կարծիքով, հարկավոր է գտնել լուծման մի փոխհամաձայնեցված տարբերակ:

Թուրքիայի քաղաքական շրջանակներում գտնում են, որ Թուրքիան, ինչպես երբեք, այժմ իրեն շատ ուժեղ է զգում, իսկ կառավարությունը ընդհակառակն՝ շատ թույլ է:

Վերջին օրերին Թուրքիայի եւ կառավարության միջեւ համաձայնություն ձեռք բերելու ուղղությամբ ակտիվ միջնորդական գործունեություն է ծավալել Ազգայնական շարժում կուսակցության ղեկավարությունն ու անձամբ գլխավոր նախագահ Ալփարսլան Թուրքեշը: Բայց առայժմ արդյունքները գոհացուցիչ չեն, եւ հակասություններն ավելի սուր բնույթ են կրում: Իսկ առաջիկա կիրակի օրը Անկարայում սպասվում է 600 հազար գործադուլավորների բողոքի երթն ու մեծ հանրահավաքը:

Ա. Հ.

Սլովակիա. Դուբչեկի մահվան մեջ կասկածում են Ռուսաստանի հատուկ ծառայություններին

Սլովակիայի խորհրդարանային բոլոր քաղաքական կուսակցությունները համաձայնել են ստեղծել երկրի Ազգային խորհրդի (խորհրդարանի) հատուկ հանձնախումբ, որը կհետաքննի Ալեքսանդր Դուբչեկի մահվան պատճառ դարձած ավտովթարի հետեւանքները: Ինչպես հայտնեց Սլովակիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախագահի առաջին տեղակալ Միրոսլավ Շոլեյը, հանձնախումբը կկազմվի առաջիկա նստաշրջանում:

Ողբերգական վթարը տեղի էր ունեցել 1992 թ. սեպտեմբերի 1-ին Պրահա-Բրատիսլավա ավտոմայրուղու 88-րդ կիլոմետրի վրա: Նրանք վերադառնալով, հայտնի քաղաքական գործիչ, 1968թ. «Պրահայի գարնան» առաջնորդ եւ 1989 թ. «Թավշյա հեղափոխության» ղեկավար Ա. Դուբչեկը մահացավ [illegible] 1992թ. նոյեմբերի 7-ին:

[illegible] հանձնախմբի ստեղծման նախաձեռնությունը պատկանում է սոցիալ-դեմոկրատներին, որոնց ղեկավարն էր Դուբչեկը: Կուսակցության ներկայացուցիչներ եւ վարձված փաստաբաններ կարծիքով ավտովթարի գործի քննությունը չի տվել բազմաթիվ հարցերի պատասխաններ: Դա հաստատեց նաեւ Սլովակիայի հեռուստատեսության BTB մասնավոր ծրագրի հաղորդումը: Դրա ընթացքում առաջին անգամ ելույթ ունեցավ Դուբչեկի մեքենայի վարորդը: Նա հայտարարեց, թե այս բոլոր տարիներին ինքը լռել է «հոգեկան վախ վիճակի պատճառով»: Չնայած այն բանին, որ վարորդն ըստ ոստիկանների վերարտադրեց վթարին նախորդած ժամերը, կուսակցության փաստաբանը հետեւություն արեց, որ «վթարը նախօրոք ծրագրված է եղել, ուստի պետք է խոսել Դուբչեկի վրա կատարված մահափորձի մասին»: Քանի դեռ ողջ են վկաներ [illegible] արխիվային փաստաթղթեր, անհրաժեշտ է հանում [illegible] պատասխան օգնարտության դարձել իսկությունը, որոնցից սերունդները ենթադրություններ չանեն եւ անհիմն մեղադրանքներ չմատնեն մոր վարորդների հարաբերությունները, գտնում են սոցիալ-դեմոկրատների ղեկավարները: Նրանց ներկայիս ղեկավար Յարոսլավ Վոլֆը նույն հեռուստահաղորդման ժամանակ հայտնեց, որ վթարի նախօրեին Դուբչեկը հրավիրված է եղել Մոսկվա մասնակցելու ԽՄԿԿ-ի գործին առնչվող դատական նիստին: Նա դատապարտվել է այդ նիստին, գրել իր ելույթի տեքստը: Այն փաստաթղթերը, որոնցից օգտվում էր Դուբչեկը, սեղմեցրեցին այդ օրը նրա մոտ են եղել, բայց խորհրդավոր կերպով անհետացել են մեքենայից: Վթարի վայրում դրանք չեն հայտնաբերվել: Դուբչեկից հետո Վարշավայում զոհվել է նաեւ Լեհաստանի նախկին վարչապետ Պյոտր Յարոշեւիչը, որը նույնպես պետք է վկայություն տար ԽՄԿԿ-ի [illegible]: Դուբչեկի առեղծվածային մահվանը նվիրված հեռուստաֆիլմը բացահայտորեն ակնարկում էր, որ Սլովակիայի սոցիալ-դեմոկրատները կասկածում են Ռուսաստանի հատուկ ծառայություններին:

«Լուսոյի ազգվեղկի ի կոնտրազվեղկի», N 17-18

Ֆրանսիա. Դպրոցի ծախսերի մեծ մասը հոգում է պետությունը

Ֆրանսիայի կրթության նախարարության գնահատման եւ ծրագրման վարչության 1995թ. հուլիսի թիվ 95.30 հաշվետվության համաձայն, երկրի դպրոցական համակարգի ծախսերը 1994 թ. կազմել են ընդհանուր առմամբ 538 մլրդ ֆրանկ: Մեկ աշակերտի վրա միջին հաշվով ծախսվել է տարեկան 32100 ֆրանկ: Եթե 1990-1993 թթ. կրթական ծախսերի ընդհանուր գումարի աճի տեմպերը գերազանցում էին ներքին համախառն արտադրանքի աճին (2,7 տոկոս), ապա 1994 թ. աճը կազմեց 2,2 տոկոս: Կրթության ծախսերի 82 տոկոսը հատկացվել է դասավանդման աշխատանքներին, իսկ մնացած 18 տոկոսը՝ կառավարման, [illegible] գրքերի գնումներին եւ այլն: Պետությունը շարունակում է մնալ կրթական [illegible] գլխավոր ֆինանսավորողը (65 տոկոս): Տարածքային համայնքները վճարում են ծախսերի 20 տոկոսը, ընտանիքները՝ 7, ձեռնարկությունները՝ 5, ընտանեկան նպաստների դրամարկղերը՝ 2, վարչական մյուս միավորները՝ 1 տոկոս:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Բացվեց հայ արվեստի 7-րդ գիտաժողովը

Ինչպես տեղեկացրել ենք, երեկ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում աշխատանքը սկսեց հայ արվեստին նվիրված 7-րդ հանրապետական գիտական կոնֆերանսը, որը երեքօրյա նիստերում կամփոփի ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի բազմաժանր աշխատանքը, նիստերի ընթացքում կարդացվող 61 զեկուցումները բերեւս լույս ափեն արվեստաբանության վիճելի խնդիրների վրա:

«Ա եգնից հետո կատարված փաստերի, դեպքերի մասին ավելի լավ տեղեկանում ենք արվեստի գործերից. Մակբեթ բալադորին դիտի ճանաչենք Շեքսպիրի աղբերգությունից, Տոլստոյի ճշմարտացի կերպարն առանց Բունինի էսքեմ կարդալու չի ամբողջանա, գիտությունն ինչքան էլ առաջացի, որ Սալիերին չէ Մոցարտին թունավորողը, միեւնույն է, գրականությունից հայտնի Մոցարտ-Սալիերի հակադրությունը տաղանդ միջակության դպրվարն է: Ռենեսանսի մասին իմ դպրեփարցումներն ամբողջական դարձան Իոդոլիս Տեն կարդալով», գիտաժողովի լիագումար նիստի բացմանն ասաց ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն Լեւոն Հախվերդյանը:

Արվեստի տարեւային ընթացքը արվեստաբանությունն է կարգավորում: Հայ միջնադարյան մանրանկարչությունն առանց Միրարիի Տեր-Ներսեսյանի, հայ ճարտարապետությունն առանց Թորոս Թորոսյանի եւ Ստրժիգովսկու, հայ երաժշտությունն առանց Կոմիտասի եւ հաջորդների, հայ բաստոնն առանց Գառնիկ Ստեփանյանի, Ռոբեն Զարյանի, բերի կլինեն: Հայ շեխմպիրագիտության Ռոբեն Զարյանի հրատարակած 7 հատորներն լրացվեցին Յուզովսկու աշխատությամբ: Ելույթ ունեցողն այնուհետեւ ներկայացրեց իր տնօրինած ինստիտուտի աշխատանքը այն հիմնականում բաժանելով 3 ուղղվածության: Առաջինը ազգային արվեստի ակունքների մեջ խորանալն ու կարեւոր գիտական աշխատությունների ծնունդն է: Երկրորդ գլխավոր գործը վերջին 70 տարում ստեղծված հայ գեղարվեստական մշակույթի նորովի ուսումնասիրությունն է, վերաիմաստավորումը, որը նյութի իմացությունից բացի, դպահանջում է նաեւ ուշադիր վերաբերմունք «տաբակի ջրի հետ երեխաներ դուրս չընտենք»: Արվեստի ինստիտուտի երրորդ գլխավոր ուղղվածությունն արվեստի երեւույթների ամրակայումն է (ֆիքսացիան): «Մենագրությունները որոշ ժամանակ հետո հնանում են, իսկ տարեգրությունը չի հնանում: Սերունդներին հարուստ տարեգրություն դեսք է բողնենք»:

Վահրամ Թաբիկյանի առաջարկով դահլիճը հոսնկայս հարգեց վերջին տարիներին վախճանված արվեստագետների հիշատակը: Գիտաժողովի առաջին զեկուցողը «արվեստաբանության նահապետ» (Լ. Հ.) Վարագյաս Հարությունյանը («Մեծ եղեռնի թեմայի արտացոլումը ճարտարապետության մեջ»), մեկ տարի առաջ մեկ հիշատակեց Մեծ եղեռնի թեմայով Հայաստանում կերտված տարբեր հուշակոթողները, ներկայացրեց դրանց արտահայտչամիջոցներին, գաղափարական, ճարտարապետա-գեղարվեստական հետաքրքիր լուծումները: Զեկուցողը հանգամանալից խոսեց Արծիվ Վասպուրականի կոթողային հուշարձանի (հեղինակ Ջիմ Թորոսյան), Հաճնի հերոսամարտի կոթողի (հեղինակ Մ. Իսրայելյան), ամրոցակերտ, մոնումենտալ Մուսալեռ հուշակոթողի (Մ. Իսրայելյան, Արա Հարությունյան), Խաչիկ եւ Ասոս Աղամալյանների մահարգամամբ Նոր Այնթապում, Աղարանում (հեղինակ Ռ. Իսրայելյան) ստեղծված հուշակոթողների մասին: Իսկ Սարդարապատի հուշահամալիր (հեղ. Մ. Իսրայելյան, Ա. Հարությունյան, Ս. Մանասյան, Ա. Շահինյան) հետաքրքիր շարունակություն գտավ մշակութային գեղեցիկ օջախի բանգարանի մեջ: Դեռ նորանոր կոթողներ կզարդարեն հայոց հողը, աղացույց Տիծեռնակաբերդում Արբուր Թարխանյանի եւ Սաշուր Քալաշյանի կողմից լրացվող ճարտարապետական աշխատանքը, ելույթը եզրափակեց դրն Հարությունյանը: Գիտաժողովին ներկա էր հայեղեռնահայ մշակութային Թորոս Թորանյանը, որի առաջարկը «խոսենք նաեւ Սփյուռքում կանգնեցված հուշակոթողների մասին», ավելի շատ իր իսկ աղագա դրդումների ու հետո նաեւ գրչի ուրվագիծը դարձավ:

«Մեղեդիական չափանիշների (մոդելների) դերը խազային նոտագրության համակարգում» թեմայով զեկուցում կարդաց Գեորգ Գյոդակյանը, որը ելույթի սկզբում կարեւորեց խազագրության մեջ Տնտեսյանի կատարած աշխատանքը: Ավելի շատ նեղ մասնագետների լսարանի համար կարդացված զեկուցումը փորձում էր դասախոսել մի քանի հարցերի ինչ նոպատակի է ծառայում խազագրությունը, ինչ կարող էին ցույց տալ խազերը, ինչ չէին կարող եւ այլն: Քննելով Շարակնոցի նյութը տեսանելի է դառնում, որ խազերը ցույց չէին տալիս ձայնի բարձրությունը, այլ հայ միջնադարյան երգերի ձայնեղանակի համակարգը, որը կողմնորոշիչ դեր ուներ: Շարակնոցում ընդգրկված են մեղեդիական տարբեր չափանիշներ յուրաքանչյուրն ինքնուրույն արտահայտությամբ: Խազերն օգնում էին չափանիշները գրական տեքստին հարմարեցնելու: Խազերի վերծանման խնդիրը, ըստ զեկուցողի, այս ուսումնասիրությամբ չի սպառվում, դարգաղես «բունելի վերջում կարծես թե լույս է երեւում»:

Պարույր Մուրադյանի «Պատկերների տեսական եւ գործնական խնդիրը ԺԲ-ԺԳ դարերի մատենագիրների երկերում» վերնագրյալ զեկուցումը ընում էր այդ դարերում հայոց եկեղեցու ներկայացվող ծիսադավանական հանդիմանությունների մեկը, որ վերաբերում է դպատկերների խնդրին: Հայ մատենագիրների կարծիքները ներկայացնելով բանախոսը եզրակացրեց, որ ԺԲ-ԺԳ դարերի դաբատամունքային կառույցներում որմնանկարների առկայությունը նաեւ տեսությամբ հիմնավորված իրողություն է, ուստի հայոց եկեղեցին «դպատկերամարտ» ներկայացնելու, դրանից էրնոմշակութային տարբ վերագրումներ անելու փորձերը դարգաղես դպասական աղբյուրներին անհիրազեկ լինելու հետեւանք է:

«Թորոս Ռոսլինի արվեստը եւ նրա առնչությունները բյուզանդական գեղանկարչության հետ» Իրինա Դրամբյանի զեկուցումը դպասախանում էր զեկուցողի բնորոշմամբ այն անհիմն ենթադրություններին, թե Թորոս Ռոսլինի եւ նրա արվեստի ակունքների սկիզբը դեղի Եվրոպա (Իտալիա) է տանում:

Ռոսլինի արվեստը սերում է հայ մանրանկարչության ավանդներից եւ կրում է բյուզանդական գեղանկարչության ազդեցությունը (գիծ, գունային համակարգ, տարածության կառուցում եւ այլն): Ներկայացվեց նաեւ Ռոսլինի ազգային զգացողությամբ դպայմանավորված ինքնատիպ աշխարհընկալումը: Երեկվա նիստը եզրափակվեց Մանյա Ղազարյանի «Գրիգոր Լուսավորչի խաչվառը» զեկուցումով, որի նյութը ընում է հայ միջնադարյան ասեղնագործության դպահպանված ամենահին ստեղծագործությունը (Էջմիածնի վանք, Ալեք եւ Մարի Մանուկյան գանձատուն): Վերականգնման, առպա ուսումնասիրությունների շնորհիվ հնարավոր եղավ դպարզել ստեղծագործության ժամանակը հայտնի 1448 թվականի փոխարեն 1215-1251 թթ., երբ կառուցվել է Անիի Տիգրան Հոնենցի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Ստեղծվել է Անիի դպլատամ, բագոհտ կողմից նվիրաբերվել նորակառույց եկեղեցուն:

Այսօր գիտաժողովի աշխատանքը կշարունակի հայ հին եւ միջնադարյան ճարտարապետության եւ կերպարվեստի մասնաճյուղը ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում: Նիստը կսկսվի ժամը 10-ին, ընդմիջումից հետո կշարունակվի ժամը 14-ին:

ԼՈՒԻԶԱ ՀՈՒՍՈՓՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅՐԵՆԻՔ

Նպատակը հայոց լեզվի եւ մշակույթի տարածումն է

«Դեւոնդ Ալիշան» ընկերության սիրելի հայրենակիցներ. կը փութամ գրեթե նուիրել նորածին զաւակս եւ անոր կը մաղթեմ, ինչպես նաեւ ընկերությանդ հարատեւ վերելք ու ազգանուէր գործունեութիւն»: Պատմաբան դոկտոր Գեւորգ Բաղջյանի այս ընծայագրով գիրքը այն բազմաթիվ գրքերից մեկն է, որոնք իրենց հետ Կանադայից բերել են մանկավարժական Նուրեւան Ուզունյանը, Անդրանիկ Պետրոսյանը եւ տիկին Խաբուն Դեմիրճյանը՝ նվիրելու «Դեւոնդ Ալիշան» ընկերությանը:-

Ընկերությունը, որ գոյություն ունի արդեն 5 տարի, նպատակ է դրել նպաստել հայոց լեզվի եւ մշակույթի տարածմանը աշխարհում, հատկապես ներքին սփյուռքում: Կազմակերպության նախագահ Սվետլանա Սալանյանի վկայությամբ, ընկերությունը մասնաճյուղեր ունի Ֆրանսիայում, Կանադայում, ԱՄՆ-ում, ինչպես նաեւ Մոսկվայում, Կիեւում: Կազմակերպության ներկայացուցիչները գործում են Սավրոպոլում, Պյատիգորսկում, Պենզայում, Կրասնոդարում, Ռոստովում: Ընկերությունը զբաղվում է ուսումնական, հրատարակչական, կրթական եւ հեռազդական հարցերով:

Սկսած 1991 թ-ից, ամեն տարի կազմակերպվում է «Հայոց լեզու եւ մշակույթ» ամառային դասընթացը, որի ունկնդիրներն են սփյուռքի մեր հայրենակիցները (միայն Ֆրանսիայից ամեն տարի 2-5 մարդ է մասնակցում) եւ բոնագաղթածները: «Հայ մշակույթ» առարկայի գծով դասավանդվում է հայ ժողովրդի, հայ առաքելական եկեղեցու, արվեստի, երաժշտության պատմություն: Հեռազդական հայագիտական խումբն զբաղվում է դասագրքեր, գրուցարաններ եւ բառարաններ կազմելով. արդեն հրատարակվել է «Բազմալեզվյան պատկերազարդ բառարանը» (հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, իսպաներեն եւ ֆրանսերեն, մոտ 2000 բառ): Նախատեսվում է առաջիկայում հրատարակել «Ռուս հայերեն բառակազմական ուսումնական բառարան», որ «բոնագաղթածների եւ ներքին սփյուռքի համար շատ անհրաժեշտ է»: «Երեխաները մեր ապագան են» ծրագրի շրջանակներում ուշադրություն է դարձվում սփյուռքի եւ բոնագաղթած երեխաներին: Ամոանը 50 երեխայի համար «Ճանապարհ հայրենիք» ծրագրով ճամբար էին կազմակերպել Նորվեգիայում (20 բ՝ բոնագաղթածներ, նույնքանը՝ եղեգնաձորի շրջանի խայիկ գյուղից, 10 բ՝ երեւանից): Միությունը կարող է հաստատել Իսլանդիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի միջազգային կազմակերպությունների հետ: Իսկ ֆինանսական օգնության հարցում ոչ հաճախ, բայց երեւան են գալիս տարբեր հաստատություններ (Հատուկ ծրագրերի վարչություն, «Երեւանկրեդիտ» բանկ եւ այլն):

Երեկ «Դեւոնդ Ալիշան» ընկերության համեստ աշխատանքային կանադահայեր Ն. Ուզունյանը, Ա. Պետրոսյանը եւ Խ. Դեմիրճյանը, որոնք պատասխան այցով եկել են ծանոթանալու ընկերության գործերին, կազմակերպության գրադարանին հանձնեցին մոտ 4 տասնյակ անուն գրքեր՝ հրատարակված տարբեր երկրներում՝ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն: Հայտնի դարձավ նաեւ, որ միությունը կանադահայ բարերարներից կստանա ֆաքս:

ՅՈՒ. Ս.

ՀՈԲԵԼՅԱՆ

«Կկարողանամ հնել... մեռնելուց հետո»

Ռայներ Վերներ Ֆասբինդեր

Գերմանացի վաղամեռիկ գրող, կինոյի եւ բատրոնի ռեժիսոր Ռայներ Վերներ Ֆասբինդերը (1945-1982), որի 50-ամյակը լրացավ օրերս, երեւի նախագգում էր, որ ճակատագրով տրված կյանքի իր բաժինը շատ կարճ է լինելու: Նա խենթի նման էր աշխատում, տարբեր տարիներին նկարահանեց 10 ֆիլմ, Մյունխենում եւ Մայնի Ֆրանկֆորտում բատերախմբեր ղեկավարեց, զբաղվեց հեռուստաեժիտուրայով, նաեւ խաղաց առավել հաճախ գլխավոր դերեր մարմնավորելով: 3 կանանց ճակատագիր ներկայացնող «Մարիա Բրաունի ամուսնությունը», «Լոլա», «Վերոնիկա Ֆոսսի խոսքը» կինոեռապատումի միջոցով Ֆասբինդերը ստեղծեց հետպատերազմյան Գերմանիայի ճշմարիտ դպակերը:

Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատանը
ՀԱՐԿԱՎՈՐ Է
հարմարավետ առանձնատուն կամ բնակարան երկու եւ ավելի սենյականոց Երեւանում:
Զանգահարել 28-04-57, 52-98-30:

ԳՆՈՒՄ ԵՄ
«Ժիգուլի» կամ «Նիվա» ավտոմեքենա նորմալ վիճակում:
Հեռ. 53-04-34:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Ինքնահաստատում

Երեկ Խաչատրյանի տուն-թանգարանում կայացավ Թամար Հովհաննիսյանի մենահամերգը

Արդեն 14 տարի է, ինչ դաշնակահարուհի, արվեստագիտության թեկնածու Թամար Հովհաննիսյանը որպես դաշնակահար չի ներկայանում: Այդ ընթացքում, չհեռանալով դաշնամուրից, նա հրատարակել է երաժշտական հոդվածներ ու գրքեր: Երկարատեւ լռությունից հետո, հուլիս ասսրս Կասսրուհի երաժշտության տանը դաշնակահարուհին վերադարձավ իր ուսկզբի ջերմ ընդունելությունը: Երեկ Արամ Խաչատրյանի տուն թանգարանում կայացավ Թամար Հովհաննիսյանի մենահամերգ կրկնությունը: Հնչեցին Մոցարտի վարիացիաներ «Ֆմայիչ Ֆրանսուազ» երգի եւ Զովանցի Պահգիելոյի «Կեղծ փիլիսոփաներ» կատակերգական օպերայի թեմաներով, «Ֆանտազիա ռե մինորը», «Ֆանտազիա դո մինորը», Լիստի «Մխիթարանք», «Սահվան բափորը», «Օբերմանի հովիտը» ստեղծագործությունները, Շուբերտի «Պատկերային խաչերգը» եւ «Ալլոսսպը»: Համերգին մասնակցում էր նաեւ Անոնո Բաբաջանյան մրցույթի դափնեկիր Կամիլա Երկանյանը, որը ծնող ներ՝ Թամար Հովհաննիսյանի եւ երվանդ Երկանյանի ստեղծագործական տարբեր աշխարհներն իր մեջ ունենալով փորձում է իր առանձին աշխարհի ելեւէջները որսալ:

Համերգը կազմակերպվել էր դաշնակահարուհու սեփական նախաձեռնությամբ, դահլիճը տրամադրել էր թանգարանի տնօրենությունը:

«Համերգի նպատակը... թեկուզ մեկը պայծառ մի բան տանի այս հանդերձից, ուրեմն այն իզուր չի անցել: Իսկ ընդհանրապես երկար ընթացքում [illegible] սրց ոչոտ [illegible] նահատաստվեցի»:

Ուշագրավ էր հանդիսատեսի տարիքային խայտաբղեղությունը:

ՄԵՏԱՔՍԵՅԻ ԳԵՎՈՆԴՅԱՆ

ՌԱՄԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ
Ծորրորդ բատերաշրջան
Հոկտեմբեր
13, 14, 20, 21, 27
15, 22, 28
29
«Օսկար» Կ. Մանյե
«Մի գավաթ բարություն» Վ. Սարոյան
«Լեռնային կակաչներ» Հ. Հակոբյան
Գեղարվեստական ղեկավար ՍԱՍ ՍԱՐԳՍՅԱՆ
Ներկայացումների սկիզբը ժ. 16.00-ին
Հացեն Պուշկինի 3ա, հեռ. 56-14-45:
Տոմսերը վաճառվում են բատրոնի տոմսարկղում:

digitised by A.R.A.R.@

Մարզական

ԱՍՏՂԵՐ

Հարցազրույց հատուկ «Ազգի» համար

Ջորկաեֆը Հայաստանո՞ւմ

Անվանի ֆուտբոլիստը ողջունում է «Ազգ»-ականներին

ՅՈՒՐԻ ՋՈՐԿԱԵՖ - ծնվել է 1968 թ. մարտի 9-ին Լիոնում: Հասակը 179 սմ, քաշը՝ 72 կգ: Խաղացել է «Դեսի նում», «Վիլորբանում», «Գրենոբլում» (1984-90), «Ստրասբուրգում» (1990-91), «Մոնակոյում» (1991-95): Այս տարվա հունիսի 19-ին երկու տարվա պայմանագիր է կնքել «Պարի Սեն-Ժերմենի» հետ: Ուշագրավ է, որ ուղիղ 25 տարի առաջ, ընդամենը 3 օրվա տարբերությամբ՝ 1970-ի հունիսի 22-ին, երբ Յուրին 2 տարեկան էր, հայրը՝ Ժան Ջորկաեֆը պայմանագիր կնքեց «Պարի Սեն-Ժերմենի» հետ: Յուրին «Ստրասբուրգի» կազմում 1990-91 մրցաշրջանում ճանաչվել է 2-րդ դիվիզիոնի լավագույն խաղացող: 1991-ին «Մոնակոյի» կազմում դարձել է Ֆրանսիայի գավաթակիր: 1992-ին խաղացել է Գավաթակիրների գավաթի խաղարկության եզրափակիչում: 1993-94 մրցաշրջանում դարձել է Ֆրանսիայի առաջին դիվիզիոնի առաջնության գլխավոր ռմբարկու (20 գնդակ): Ֆրանսիայի ազգային հավաքականում անց կացրել է 13 խաղ, խփել՝ 7 գնդակ:

Ֆրանսահայ անվանի ֆուտբոլիստ Յուրի Ջորկաեֆի հետ վաղուց ծանոթ եմ: «Ազգ» թերթում նրա մասին տպագրվող ամեն մի հոդված միշտ էլ հուզմունք է կամ հոր, կամ իրեն: Սակայն նրա հետ մոտիկից ծանոթությա անցած ամռանը Փարիզի «Մոնպառնաս-Մերիլենդ» հյուրանոցի շքեղ դահլիճում, որտեղ տեղի ունեցավ Հայկական բարեգործական ընդհանուր միության մարզական համաշխարհային հերթական խաղերի փակման հանդիսավոր արարողությունը: Նա անտարբեր չի Հայաստանի և հայկական ֆուտբոլի նկատմամբ: Պատմանավորվածության համաձայն Յուրի Ջորկաեֆի հետ հանդիպեցի Փարիզից 30 կմ հեռավորության վրա գտնվող «Պարի Սեն-Ժերմենի» «Սեն Ժերմեն Այեյ» մարզամարտիրում: Պարապմունքից հետո Յուրի Ջորկաեֆին ընդամենը 15 րոպե ազատ ժամանակ ուներ, քանի որ շտապում էր բժշկական ստուգման: Նրա դարանոցի դռները անհանգստացնում: Որոշեցինք ժամանակ չկորցնել և անմիջապես անցանք հարցազրույցի:

- Ամենուրեք նշում ես հայկական ծագումդ: Դա քո ֆուտբոլային կարիերային չի՞ խանգարում:

- Ամենևին: Ես բոլորին հարգանքով ասում եմ, որ հայ եմ: Միայն մեկ բանից եմ խուսափում քաղաքականության մասին չեմ խոսում, որովհետև լրագրողներ իրենց ոգածի դեմ փաստեր չէրջեն: Հանախ եմ լինում հայկական հավաքներում: Այդպիսի միջավայրը ես և տիկինս, որը ֆրանսուհի է, շատ ենք սիրում: Հարանիս հայկական եկեղեցում է եղել Մաս ծնողներս, ինչպես ամեն մի հայ, նեղությունն են եկել Ֆրանսիա: Ես մեծացել եմ հայկական միջավայրում և աղրել եմ դպրոց ու տասիս մոտ:

- Հայդ Ժան Ջորկաեֆը, որին ֆուտբոլային ավարտում Չուկի են անվանում, որտեղի՞ց է:

- Հայրս ազգությամբ կալմիկ է: Նա ժամանակին մեծ ֆուտբոլիստ էր և երկար տարիներ խաղացել է ոչ միայն «Պարի Սեն-Ժերմենում», այլև Ֆրանսիայի հավաքականում, որի ավագն է եղել նաև: Փորր եղբայրս մեծ հաջողությամբ խաղում է «Ալես» թիմում, որը մասնակցում է Ֆրանսիայի երկրորդ դիվիզիոնի առաջնությանը:

- Հայկական ֆուտբոլի մասին ի՞նչ գիտես:

- Հիմա, որ Հայաստանի հավաքականը մասնակցում է Եվրոպայի առաջնությանը, միշտ հետևում եմ նրա ելույթներին: Առաջին հաղթանակը Մակեդոնիայի հավաքականի նկատմամբ և այն էլ նրա դաշտում վկայում է, որ հայկական ֆուտբոլի մակարդակը ցածր չէ:

- Հայաստանցի ֆուտբոլիստներից ո՞ւմ ես ճանաչում:

- Միայն Աշոտ Խաչատրյանին, որին տեսել եմ անցյալ տարի, երբ հայ ֆուտբոլիստներից կազմված հավաքականը բարեգործական խաղում մրցեց «Թուլոն» թիմի հետ: Այդ խաղին մասնակցեց նաև Աշոտ Խաչատրյանը: Գիտեմ նաև Համլետ Մխիթարյանին:

- Հայաստանցի ֆուտբոլիստները կարո՞ղ են խաղալ եվրոպական պրոֆեսիոնալ թիմերում:

- Իհարկե կարող են: Ցիշտ է, Հայաստանի հավաքականը պարտվում է, սակայն պարտվում է զորեղ թիմերի, այն էլ նվազագույն հաշիվներով: Նշանակում է, գոնե լավ պաշտպանություն ունեն: Նրանք հաստատես հաջող կարող են խաղալ Ֆրանսիայում, քանի որ այստեղ հայկական շրջադարձը մեծ է:

- Ֆրանսահայ մյուս ֆուտբոլիստների հետ հանդիպո՞ւմ ես:

- Երբ առիթ ստեղծվում է, այո: Օրինակ, «Մոնպելյե»-«Պարի Սեն-Ժերմեն» խաղին (1-0) հանդիպեցի «Մոնպելյեի» ավագ Միշել Տեր-Զաքարյանի հետ: Լավ ընկերներ ենք: Նույնը կարող եմ ասել Էրիկ Ասատուրյանի և Կաննում ու Լիոնում գտնվող հայ ֆուտբոլիստների մասին:

- Իրար հետ հայերի մասի՞ն եք խոսում ու ինչ լեզվով հայերե՞ն, թե՞ ֆրանսերեն:

- Ես հայերեն լավ չգիտեմ: Մենք հիմնականում խոսում ենք ֆուտբոլի մասին:

- Չե՞ս ուզում Հայաստան այցելել:

- Երբ ոչինչ չխանգարի, 1996 թ. ամռանը անպայման կայցելեմ Հայաստան, Եվրոպայի առաջնությունից հետո, եթե իհարկե Ֆրանսիան եզրափակիչի ուղեգիր ձեռք բերի:

ԱՇՈՏ ԲՈՅԱՋՅԱՆ

Փարիզ



Յուրի Ջորկաեֆը եւ Աշոտ Բոյաջյանը հարցազրույցի ժամանակ

Աֆրիկայի ֆուտբոլի առաջնությունը

ԳԵՎՈՐԳ ԱՍԱՐԵՅԱՆ

Վալանս, Ֆրանսիա

Ֆուտբոլի աշխարհի վերջին առաջնության խաղերը համոզեցին, որ Աֆրիկայի ֆուտբոլը զգալի առաջընթաց է ապրել, որը հաճելի հայտնություն է: Եթե 1990 թ. Իտալիայում տեղի ունեցած աշխարհի առաջնությունում Կամերունի հավաքականը մտավ քառորդ եզրափակիչ և զարմացրեց իր գեղեցիկ խաղով, ապա ԱՄՆ-ում Նիգերիան էր մոտ նույնիսկ հաջողության: Սակայն Աֆրիկայի երկրների ելույթները աշխարհի առաջնություններում:

1934 թ. (Ուրուգվայ), եզիպտոսը մտավ 1/8 եզրափակիչ, որտեղ 2-4 հաշվով զիջեց Հունգարիայի հավաքականին:

1970 թ. (Մեքսիկա): Մարոկկոյի հավաքականը 4-րդ տեղը գրավեց 4-րդ խմբում (Գերմանիա-Մարոկկո 2-1, Պերու-Մարոկկո 3-0, Բուլղարիա-Մարոկկո 3-1):

1974 թ. (Գերմանիա): Զաիրը 4-րդ տեղը գրավեց 2-րդ խմբում (Շոտլանդիա-Զաիր 2-0, Հարավսլավիա-Զաիր 9-0, Բրազիլիա-Զաիր 3-0):

1978 թ. (Արգենտինա): Թունիսի 3-րդ տեղը գրավեց 2-րդ խմբում (Թունիս-Մեքսիկա 3-1, Լեհաստան-Թունիս 1-0, Գերմանիա-Թունիս 0-0):

1982 թ. Աֆրիկան ներկայացնում էին 2 թիմեր՝ Ալժիրն ու Կամերունը: Ալժիրը 3-րդ տեղը գրավեց 2-րդ խմբում (Գերմանիա-Ալժիր 1-2, Ավստրիա-Ալժիր 2-0, Ալժիր-Չիլի 3-2):

Կամերունը 3-րդ տեղը գրավեց 1-ին խմբում (Պերու-Կամերուն 0-0, Լեհաստան-Կամերուն 0-0, Իտալիա-Կամերուն 1-1):

1986 թ. (Մեքսիկա): Մարոկկոն առաջին տեղը գրավեց F խմբում եւ 1/8 եզրափակիչում հանդիպեց Գերմանիայի հավաքականի հետ (Լեհաստան-Մարոկկո 0-0, Անգլիա-Մարոկկո 0-0, Մարոկկո-Պորտուգալիա 3-1): 1/8 եզրափակիչ՝ Գերմանիա-Մարոկկո 1-0:

Ալժիրը 4-րդ տեղը գրավեց D խմբում (Ալժիր-Հյուսիսային Իռլանդիա 1-1, Բրազիլիա-Ալժիր 1-0, Իսպանիա-Ալժիր 3-0):

1990 թ. (Իտալիա): Կամերունը 1-ին տեղը գրավեց 2-րդ խմբում, այնուհետեւ հասնելով մինչեւ քառորդ եզրափակիչ (Կամերուն-Արգենտինա 1-0, Կամերուն-Ռումինիա 2-1, ԽՍՀՄ-Կամերուն 4-0): 1/8 եզրափակիչ՝ Կամերուն-Կոլումբիա 2-1 (լրացուցիչ ժամանակում): 1/4 եզրափակիչ՝ Անգլիա-Կամերուն 3-2 (լրացուցիչ ժամանակում):

Եգիպտոսը 4-րդ տեղը գրավեց 6-րդ խմբում (Հոլանդիա-Եգիպտոս 1-1, Հյուսիսային Իռլանդիա-Եգիպտոս 0-0, Անգլիա-Եգիպտոս 1-0):

ՇԱԽՄԱՏ

Կասպարովը պահպանեց իր տիտղոսը

Նյու Յորքում տեղի ունեցող Պրոֆեսիոնալ շախմատիստների ասոցիացիայի վարկածով աշխարհի առաջնության Կասպարով-Անանդ մրցախաղի 17-րդ պարտիան, որում սպիտակներով խաղում էր Անանդը, ավարտվեց ոչ-ոքի: Կասպարովը վաստակեց 10 միավոր եւ պահպանեց աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը: Հաշիվը դարձավ 10-7: Սակայն մրցախաղում հաղթելու եւ 1 մլն դոլլարին տիրելու համար աշխարհի չեմպիոնը մնացած 3 հանդիպումներում պետք է վաստակի կես միավոր:

ՖՈՒՏԲՈԼ

Պատանիների կրկնակի հաջողությունը Իսպանիայում

Հոկտեմբերի 1-4-ը Իսպանիայում, Բարսելոնից ոչ հեռու գտնվող Մալգրադ դե Մար քաղաքում, անցկացվեց պատանի ֆուտբոլիստների միջազգային մրցաշար, որին մասնակցում էին նաև Երեւանի 16 եւ 18 տարեկան խաղացողներից կազմված թիմերը: 18 տարեկան հայ ֆուտբոլիստներ միեւնույն 4-0 հաշվով նախ պարտության մատնեցին գերմանական «Էյբեկ Համբուրգ», առա տեղի ունեցավ «Մալգրադ դե Մար» թիմերին: 16 տարեկան մարզիկներ կարողացան 7 անպատասխան գնդակ անցկացնել «Մալգրադ դե Մարի» դարպասը: Այնուհետեւ, մրցելով գերմանական «Գոռնի» թիմի հետ, բավարարվեցին ոչ-ոքի (0-0) արդյունքով: Տարիքային երկու խմբերում լավագույն ցուցանիշներն ունեցան Հայաստանի թիմերը, որոնց էլ հանձնվեցին խաղարկված մրցանակները: ԵՏ

Վեստերաններն Աղարանի շրջանում

Աղարանի Շենավան գյուղում շահագործման հանձնվեց ֆուտբոլային նոր մարզադաշտը: Բացման հանդիսավոր արարողության եզրափակիչ ակորդը հանդիսացավ վետերան ֆուտբոլիստների Հայաստանի Հանրապետության եւ Շենավան գյուղի հավաքականների հանդիպումը: Առաջին կեսում դաշտի տերերին հաջողվեց արժանի դիմադրություն ցույց տալ ահեղ մրցակցին (1-1): Սակայն երկրորդ կեսում հյուրերը լիովին տիրեցին նախաձեռնությանը: Խաղն ավարտվեց վետերան ֆուտբոլիստների Հայաստանի հավաքականի հաղթանակով՝ 5-1 հաշվով: Հյուրերից գոլերի հեղինակներ դարձան Խորեն Հովհաննիսյանը, Էդվարդ Հարությունյանը, Սամվել Պետրոսյանը, Վարուժան Սուքիասյանը եւ Սամվել Ղասաբաղյանը: Վետերան ֆուտբոլիստների Հայաստանի հավաքականը հանդես է կալիս հետեւյալ կազմով. Վարդան Աբրահամյան, Արմենակ Սարգսյան, Գագիկ Հովհաննիսյան, Նորայր Մեսրոպյան, Սուրեն Մարտիրոսյան, Աշոտ Սահակյան, Խորեն Հովհաննիսյան, Սամվել Պետրոսյան, Էդուարդ Մարգարով, Վարուժան Սուքիասյան, Սամվել Ղասաբաղյան: Փոխարինման դուրս եկան Էդվարդ Հարությունյանը, Արմեն Բալաբեկյանը, Ստեփան Գեւորգյանը եւ Ազատ Մանգասարյանը:

Ծեծեցին մրցավարին

Այս խուլիգանական միջադեպը տեղի ունեցավ Եղվարդի մարզադաշտում՝ Ֆուտբոլի Հայաստանի առաջնության առաջին խմբի թիմերի «Եղվարդ»-«Արաբկիր» հանդիպման ժամանակ: Խաղի մրցավար Սոյարտակ Հովհաննիսյանը (Երեւան) վիճելու համար նախ զգուշացրեց, ապա, երբ հաջորդեց հայհոյանքը, միանգամայն իրավացիորեն որոշեց դաշտից հեռացնել «Եղվարդ» թիմի ավագ Արմեն Խաչատրյանին: Այդ պահից ֆուտբոլիստ Ա. Խաչատրյանը ավելի շատ հիշեցնում էր բռնցքամարտի կիր: Հասկանալի է, որ բռունցքներով մրցավարի վրա նետվեցին եւս մի քանի խաղացողներ: Ի վերջո, հարկ եղավ 25 րոպեով ընդհատել հանդիպումը: Վերսկսված խաղը 2-0 հաշվով շահեց «Արաբկիրը», որը օգտագործեց թե՛ իր վարպետությունը եւ թե՛ Ա. Խաչատրյանի բացակայությունը: Ի դեպ, կհայտնվե՞ն խաղադաշտում արդյոք նա եւ նրա սանձարձակ «թիմակիցները» հաջորդ հանդիպումների ժամանակ՝ մոտ օրերս կորոշի Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան: ԵՏ

Մարադոնան վերադարձավ

Անցյալ տարի ԱՄՆ-ում տեղի ունեցած ֆուտբոլի աշխարհի 15-րդ առաջնությունում ՖԻՖԱ-ի կողմից Դիեգո Մարադոնայի որակազրկման ժամանակը սպառվեց: Աշխարհահռչակ ֆուտբոլիստը կրկին խաղադաշտ վերադարձավ եւ հարգավ Արգենտինայի «Բոկա Խունիորս» թիմի հագուստը, որի կազմում սկսել է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի իր կարիերան: Մարադոնայի վերադարձը մեծ ոգեւորությամբ ընդունեցին ֆուտբոլասերները, իսկ «Բոկա Խունիորսը» Արգենտինայի առաջնության հերթական տուրում Մարադոնայի մասնակցությամբ 1-0 հաշվով հաղթեց մրցակցին: Ակնատեսների վկայությամբ Մարադոնան մեծապես նպաստեց իր թիմի հաջողությանը:

ԵՎԱ

հետեւյալ մասնագիտությունների գծով.

ուսումնական կենտրոնը հրավիրում է ձեզ սովորելու 1-3-ամսյա դասընթացներում

- համակարգչային դասընթաց (IBM PC համակարգիչների վրա, օգտագործական գործ. WINDOWS, EXCEL, Paintbrush, DBASE, ծրագրավորման լեզուներ C, PASCAL եւ այլն.
- անգլերեն լեզու (HEADWAY, Oxford հայտնաբանում մշակված մեթոդ).
- հաշվապահություն եւ համակարգիչների կիրառումը հաշվապահության մեջ.
- կոմեսիկա եւ էդիլյացիա.
- վարսավիրություն.
- մասաժ:

Ավարտողներին տրվում է վկայական (սերտիֆիկատ):

Հասցեն Սարյան փող., 4-ՍՍ Մարյանի տուն բանգարանի դիմաց)

Հեռախոսներ 58-21-22, 58-58-71

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՇՐՋԱՆ

Թուրքիան եւ Վրաստանը գոհ են կոնսորցիումի որոշումից

Ադրբեջանի կառավարական նավթի հանձնաժողովով գրաստվող միջազգային ընկերություններ նավթի արտահանման հարցում նկել են փոխզիջումային որոշման օգտագործել 2 խողովակաբար. այժմ գոյություն ունեցող Ռուսաստանի տարածով անցնողը (Բաքու-Գրոզնի-Նովոռոսիյսկ) եւ նոր կառուցվելիքը. որը Վրաստանի տարածով նավթը կհասցնի Թուրքիա: Ընդ որում միջազգային կոնսորցիումի ղեկավար Թերի Ադամսն ասել է. թե հեռագայում նախատեսվում է կրկին երկրորդ խողովակաբարին: Անկարան հույս ունի այդ խողովակաբարն օգտագործել ոչ միայն ադրբեջանական. այլեւ դազախական նավթի արտահանման համար: Թուրքիան եւ Վրաստանը ոգեւորված են միջազգային կոնսորցիումի որոշմամբ: Վարչապետ Թանսու Չիլլերն այդ որոշման ընդունման օրը համարել է նշանակալից Թուրքիայի համար եւ ավելացրել. թե այժմ կարելի է հաստատ. որ Անդրկովկասում եւ Կենտրոնական Ասիայում խաղաղություն եւ կայունություն կլինի: Որոշման կոնսորցիումի որոշումն ամրագրվի Անկարան առաջարկել է իր կարիքների համար գնել նավթի առաջին բաժինները. նաեւ. իր վրա վերցնել խողովակաբարի վերացական մասի ֆինանսավորումը: Տեխնիկական հաշվարկներով դա կլինի 200 միլիոն դոլար: Այս գումարի վերջում Ադրբեջանի նավթային դաշտերը կմտնեն աշխարհի ամենախոշոր նավթարդյունահանող դաշտերի առաջին տասնյակի մեջ: Կոնտրակտ աշխարհի կնքվածությունը մեծավորապես նավթից: Զարմանալի չէ. որեմն. որ Ռուսաստանը. Թուրքիան. Իրանն ու Արեւմուտքը պայքարում են այդ նավթին տիրանալու համար: Ինչպես հայտնի է. նավթային կոնսորցիումի մեջ մտնում են 11 ընկերություններ: Արժեթղթերի 20 տոկոսը պատկանում է «Ադրբեջանական պետական ընկերությանը». որի փոխնախագահը Հեյդար Ալիեւի որդին է. 10 տոկոսը ռուսաստանյան «Լուկոյլ» ընկերությունը. 6.5 տոկոսը թուրքական ընկերությանը: Մնացած արժեթղթերը գնել են ամերիկյան. բրիտանական. նորվեգական եւ Սաուդյան Արաբիայի ընկերությունները:

Ադրբեջանի նավթի շուրջ քաղաքական մեծ խաղ է գնում: Շատ իրադարձություններ են տեղի ունեցել այդ պատճառով: Շատ մեկնաբաններ կարծում են. որ հենց նավթամուղի պատճառով էր. որ Ռուսաստանի իշխանությունները. որոնք Դուդաեւի վարչակարգի նկատմամբ կողից դիտողի դերում էին գտնվում. նավթային պայմանագրի ստորագրումից 2 ամիս հետո ռազմական գործողություններ սկսեցին նրա դեմ: Դիտորդների կարծիքով նավթամուղն էր պատճառը. որ թուրքական կառավարությունը պատերազմ սկսեց Բուրդ անջատողականների դեմ: Դա տեղի ունեցավ այն բանից հետո. երբ Բուրդը հայտարարեցին. թե շինարարության ավարտից հետո կդադարեցնեն նավթամուղը: Կարծիքներ կան. որ նավթամուղի պատճառով գահընկեց արվեցին Ադրբեջանի նախագահներ Այազ Մութալիբովն ու Աբուլֆազ Էլչիբեյը: Անցյալ տարի նավթային պայմանագրի ստորագրման պահին էր. որ նախագահ Հեյդար Ալիեւին գահընկեց անելու փորձ կատարեց Սուրաթ Հուսեյնովը. որը վարչապետ լինելով հանդերձ չէր թաքցնում իր բացասական վերաբերմունքն այդ պայմանագրի նկատմամբ եւ ասում էր. որ առաջին հերթին պետք է հաշվի առնել Ռուսաստանի շահերը: Զարմանալի զուգադիպությամբ Շեւարդնաձեի դեմ մահափորձը կատարվել է օգոստոսի 29-ին. այսինքն Թուրքիայի վարչապետի Թրիկիսի ժամանելուց 2 օր առաջ: Իսկ վարչապետը գալիս էր. որ Շեւարդնաձեի հետ համաձայնեցնի Վրաստանով Թուրքիա անցնող երթուղին: Եւ վերջապես. Գրոզնիում գեներալ Ռոմանովի դեմ մահափորձը կատարվել է հենց այն ժամանակ. երբ Լոնդոնում կոնսորցիումի նիստում որոշվեց է վերջնականապես որոշվեր նավթի արտահանման հարցը: Օլեգ Լոբովի եւ գեներալ Ռոմանովի դեմ կատարված մահափորձերից հետո իրավիճակը Գրոզնիում ծայրաստիճան սրվել է. ինչը կարող է խոչընդոտել նավթի արտահանմանը ռուսաստանյան խողովակաբարով: Բախվում գտնվող Չեչնիայի նախագահի գիտության եւ տեխնիկայի գծով նախկին խորհրդական. այժմ Չեչնիայի «կանաչների» նախագահ. կովկասյան բնապահպանական խորհրդի նախագահ Կայսիմիրովը հայտարարել է. թե Ռուսաստանը չի կարող անվտանգության երաշխիքներ տալ Չեչնիայի տարածով անցնող նավթամուղի համար: Նա պատրաստվում է կովկասյան բնապահպանական խորհրդի անունից դիմել միջազգային կոնսորցիումին եւ բնապահպանական տվյալներ պահանջել Կովկասի. մասնավորապես Չեչնիայի տարածով նավթի արտահանման մասին: Կայսիմիրովի կարծիքով. Չեչնիայի ժողովուրդը. հանի դեռ անկախություն չի ստացել. չի համաձայնի. որ նավթն արտահանվի իր տարածով: Դժվար թե այդ ամենը Ռուսաստանին դուր գա: Այդ պատճառով էլ Անդրկովկասում. որտեղ առանց այն էլ անկայուն վիճակ է. որոշ մենաբանների կարծիքով դրությունն էլ ավելի կրվի:

ԳՐԻԳՈՐ ԷՄԻԼ.

ԲԱՔՈՒ

ԱՄՆ-ը մեծ նշանակություն է տալիս Ադրբեջանին

Բախվում է գտնվում հանրահայտ քաղաքագետ, ազգային անվտանգության գծով ԱՄՆ-ի նախկին խորհրդական Զբիգնեւ Բժեզինսկին: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի հետ հանդիպման ժամանակ նա հայտարարել է. «ԱՄՆ-ը ուշադիր հետեւում է Կովկասում տեղի ունեցող դեպքերի զարգացմանը: Չեր տարածաշրջանում դեպքերը կարող են այնպես զարգանալ. որ Ադրբեջանը կամ լրիվ կմեկուսացվի ամբողջ աշխարհից եւ կաղքատանա. կամ էլ կինտեգրացվի համաշխարհային ընկերակցություն: Բոլոր դեպքերում. մենք ԱՄՆ-ում Ադրբեջանը դիտում ենք որպես մեծ պոտենցիալ հնարավորություններ ունեցող երկիր»: Օդանավակայանում. ժամանումից անմիջապես հետո տեղի ունեցած ասուլիսում պատասխանելով այն հարցին. թե ինչպիսին է Ադրբեջանի հանդեպ Միացյալ Նահանգների ունեցած ռազմավարական դիրքը. նա ասել է. «ԱՄՆ-ը մեծ նշանակություն է տալիս անկախ Ադրբեջանին. որի հետ բարիդրացիական հարաբերություններ է զարգացնում: Սակայն մենք չենք համարում. որ մեր կողմերը Ադրբեջանի հետ ուղղված են ուրիշ որեւիցե պետության դեմ: Թույլ տվեք ասել բաց եւ ուղղակի: Մենք չենք պատրաստվում տարածաշրջանում հակաիսլամական քաղաքականություն վարել»: Զբիգնեւ Բժեզինսկին խորհուրդ է տվել Ադրբեջանին լավ հարաբերություններ պահպանել իր հյուսիսային հարեւանի. ինչպես նաեւ Իրանի հետ: Լրագրողների մեջ մեծ հետաքրքրություն է առաջացրել ամերիկա-իրանական ներկա հարաբերություններին Բժեզինսկու տված գնահատականը. «Ես համարում եմ. որ մեր երկրների միջեւ գոյություն ունեցող ընդհանրությունը անցողիկ հակամարտությունը է»:

Գ. Ե.

Օ Գ Տ Վ Ե Ք

Անվճար տեղեկություններից Հայաստանում գործող ձեռնարկությունների *առաջարկի* եւ *պահանջարկի* մասին հեռախոսով:

Զանգահարել 589167, 581351 «Սիլուս» տեղեկատու:

«ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ»

ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

11.10.1995 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ		12.10.1995 ՀԻՆԳՇԱԲԹԻ	
18.00	Տեսաֆիլմ. «ԽՍՊԱԼԻՔ» (Գլխ. դերում՝ Պիեռ Ռիշար)	18.00	Լիամետրաժ մուլտֆիլմ «ՍԵԾ ԱՐՋԸ»
19.30	Գիտահանրամատչելի ֆիլմ. «ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՇԽԱՐՅՈՒՍ»	19.00	Տեսաֆիլմ. «ՏԱՐՋԱՆ»
20.30	Տեսաֆիլմ. «ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ» (Գլխ. դերում՝ Չակ Նորրիս)	20.30	Տեսաֆիլմ. «ԿԻԲԵՐ ԳՈՏԻ»
22.30	Տեսաֆիլմ. «ԿԻԲՈՐԳ ՈՍՏԻԿԱՆ-2»	22.00	Տեսաֆիլմ. «ՍՄՐՎԱԾԸ ՀԱԿԱՌԱԿ»
24.00	Տեսաֆիլմ. «ՍԵՆՔ ԿՉԱՅՐԱՆԱՔ»	23.30	Տեսաֆիլմ. «ԱՆՉՈՒՄՊԸ»
01.30	Տեսաֆիլմ. «ԿՏՐՈՒԿ ՇՐՋԱԴԱՐՁ»	01.00	Տեսաֆիլմ. «ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՐԱՆՔ»
03.00	Ծրագրի ավարտը	03.00	Ծրագրի ավարտը

A STYLE

ԱՌԱՋԻՆ ՈՒ ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ
ԱՅՍ ԹԱՏԵՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ՈԶՆԻՆԵՐ-Ը

ներկայացնում են

«ՀՈՌԻ ԿՅԱՆՔ»

ՆՈՐ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթ ներկայացումները կկայանան Հոկտեմբերի 12-ին, 13-ին, 14-ին և 15-ին՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏՈՒՄ

Տոմսերը վաճառվում են օպերայի և հայֆիլհարմոնիայի տոմսարկղերում, մետրոյի «Երիտասարդական» և մյուս կայանների շրջակայքում, իչպես նաև՝

ներկայացումներից առաջ

Սկիզբը՝ 18-00-ին

ՈԶՆԻՆԵՐ © 1995

LEVON TRAVEL

ԲԱՆԿ
Կրեդիտ-Երևան

"Կրեդիտ-Երևան" բաժնետիրական առևտրային բանկը ընդունում է ավանդներ դրամով և ԱՄՆ դոլարով հետևյալ տոկոսադրույքներով.

դրամով
1 ամիս - 4 %
3 ամիս -15 %

Ընդունվող ավանդների նվազագույն չափը՝
200.000 դր.
կամ
300 ամերիկյան դոլար

ԱՄՆ դոլարով
1 ամիս - 2,5%
3 ամիս - 9%

Նշված տոկոսադրույքներով ավանդները ընդունվում են մինչև 1995թ. դեկտեմբերի 1-ը:

"Կրեդիտ-Երևան" բանկ
Վռամշապուհ Արքայի 2/8

հեռ. 56-60-17

ARINA

digitised by A.R.A.R.@